

ՏԻԳՐԱՆ ԶՈՒՆԱԴՅԱՆԻ «ԱՐՇԱԿ Բ» ՕՊԵՐԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՃԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ասատրյան Ա.

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Հողվածուս բացահայտվում են հայոց անդրանիկ օպերայի՝ Տիգրան Զուխաճյանի «Արշակ Բ»-ի երաժշտական լեզվի հիմնական առանձնահատկությունները: Աշխատանքը կատարված է Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի բանգարանում պատկանող Տ. Զուխաճյանի դիվանի օպերայի հեղինակային ձեռագիր պարտիտուրի բազմակողմանի և մանրակրկիտ հետազոտման հիման վրա: Տիգրան Զուխաճյանի «Արշակ Բ» պատմառոմանտիկական օպերա է: Մտեղծագործության երաժշտությունն առանձնանում է մեղեդիական շաղկապմամբ, հորձոնիկ լեզվի հարստությամբ ու բազմազանությամբ: Օպերայի երաժշտությունը վկայում է հեղինակի բարձր վարպետության մասին:

Asatryan A. О некоторых особенностях музыкального стиля оперы Тиграна Чухаджяна "Аршак Второй". В статье раскрываются основные особенности музыкального языка первой армянской оперы – произведения Тиграна Чухаджяна "Аршак Второй". Работа написана на основании всестороннего и тщательного исследования авторской рукописи партитуры оперы, хранящейся в музее литературы и искусства им. Е.Чаренца в фонде Тиграна Чухаджяна. Оперу "Аршак Второй" можно отнести к жанру историко-романтических опер. Музыка произведения отличается мелодической шедростью, богатством и разнообразием гармонического языка. Музыка оперы свидетельствует о высоком мастерстве автора первой национальной оперы.

Asatryan A. About some peculiarities of the music style of Tigran Chukhagian's "Arshak the Second" opera. T. Chukhagian's "Arshak Second" may attribute to genre of historical-romantic operas. Melody generosity, riches and variety of the harmonic language have distinguished the music of the opera. Music of the opera has been evidenced about high mastery of author of the first national opera.

*«Մեծ երգահան, պարծանք ազգին, որ տարագիր,
Բզմիրի մէջ կըրեցիր կեանքդ անշքորեն,
Յուրա ու բին դամբանիդ տակ խաղաղ հանգիր
Որ երկնից մէջ անուշ երգերդ հոգիդ օրին»:*

1868թ. Կ. Պոլսում Տիգրան Զուխաճյանն արևմտահայ տաղանդավոր բանաստեղծ և դրամատուրգ Թովմաս Թերգյանի լիբրետոյի հիման վրա ստեղծում է հայոց անդրանիկ՝ «Արշակ Բ» պատմառոմանտիկական օպերան՝ հայ օպերային թատրոնի զուլսագործոցներից մեկը:

«Արշակ Բ» օպերայի գեղարվեստական բարձր արժեքը պայմանավորված է ամենից առաջ վերջինիս անսպառ մեղեդիական հարստությամբ: Մտեղծագործության երաժշտության հիմքը վառ արտահայտված երգայնությունն է. մարդկային ձայնը օպերայի երաժշտական կտավի ստեղծման որոշիչ գործոնն է: Երգայնությունը դրսևորվում է ինչպես օպերայի ավարտուն համարներում, այնպես էլ ռեչիտատիվային տեսարաններում: Զուխաճյանի մեղեդիները հոսում են ազատ ու անկաշկանդ, ինչը ցանկացած կոմպոզիտորի համար համարվում է հազվագյուտ և հրաշալի հատկանիշ: Անզամ առանձին գործողությունների և համարների նվազախմբային մուտքերը, իրենց բնույթով վոկալ, շաբաղրամբ ու հնչեղությամբ համեստ մեղեդիները, հանդիսանալով ռոմանտիկ օպերային բնորոշ ռոմանսային-գործիքային պրելյուդի մի տարատեսակ, առանձնանում են իրենց երգային արտահայտչականությամբ: «Արշակ Բ» օպերայի երաժշտական լեզվում նկատվում է հարազատությունը XIX-րդ դարի առաջին կեսի իտալական օպերային արվեստին: Մակայն Զուխաճյանը չի հետևել ինչ-որ առանձին մոտիվների, այլ ստեղծագործաբար օգտագործել է իտալական ռոմանտիկական օպերայի ողջ փորձը: Բնական է, որ նոր հայկական երաժշտական դպրոցի կազմավորման մայրական փուլում Զուխաճյանն իր առջև, երկի թե, նպատակ չէր դրել հասնել եվրոպական օպերային արվեստի ավանդույթների և երաժշտական լեզվի ազգային ինքնատիպության օրգանական սինթեզին: Դիմելով եվրոպական լայրամից՝ Զուխաճյանը պատմեց Հայաստանի մասին բոլորին հասկանալի իտալական օպերայի լեզվով: Միաժամանակ, օպերայում ակնհայտ են կապերը Կոստանդնուպոլսի քաղաքային երաժշտական մշակույթի կենցաղային ժանրերի, մասնավորապես հայկական ազգային-հայրենասիրական երգերի ժանրի հետ:

«Արշակ Բ»-ի երաժշտական լեզվի՝ արտահայտչականության կարևոր գործոններից է հարմոնիան, որը նշանակալի դեր ունի երաժշտական կերպարների բացահայտման գործում: Զուխաճյանը հենվում է եվրոպական մասժոր և միևնույն ձայնակարգային համակարգերի ու դրանց ակորդիկայի վրա: Ակնհայտ է կոմպոզիտորի հակամը դեպի մասժոր-միևնույն ձայնակարգային համակարգի արտերացված ակորդները:

Զուխաճյանն օպերայում լայնորեն կիրառում է լայնհարմոնիայի սկզբունքը:

Ա. Փոքրացրած սեպտակորդը Ուրվականների լայնհարմոնիան է, ընդ որում հեղինակը կիրառում է այն թե՛ ուղղաձիգ և թե՛ հորիզոնական հնչեղությամբ: Այսպես, երրորդ գործողության ֆինալում՝ գերեզմանոցի տեսարանում, քամու ռոմոնը պատկերող նվազախմբի քրոմատիկ ֆրագմենտի սկզբնական հնչյունների միջև տարա-

Զնյունիայի գերեզմանատանը Տ.Զուխաճյանի շիրմին 1903թ. կանգնեցված մահաբանին փորագրված քառյակն է, որի հեղինակն է արևմտահայ բանաստեղծ Ալեքսանդր Փառուսյանը: Հիշյալ տեքստը Հայաստանում գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

ծության վրա առաջանում են փոքրացրած սեպտակորդներ՝ եռաձայն շարադրանքի ձայներից յուրաքանչյուրում, ինչն էլ գուգակցվում է նվագախմբի և Ուրվականների երգչախմբի՝ փոքրացրած սեպտակորդների ուղղահայաց-ուղղաձիգ հարվածների հետ:

The image shows a musical score for the piece 'Ave Maria' by Franz Schubert. It includes vocal parts for Soprano, Alto, Tenor, and Bass, along with piano accompaniment. The lyrics are in Latin: 'Benedictus' and 'Agnus Dei'. The score is written in a traditional musical notation style with staves and clefs.

Էջ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի ձեռագրից

Բ. Վարդնթաց սեկունդաներով բրամատիկ «սողացող» ակորդների շարքը, ուղեկցելով հերոսներից մեկին, գոծում է հաջորդ գործողության մեջ նրա սպանությունը: Այս սկզբունքը հեղինակը կիրառում է ոչ թե էպիզոդիկ, այլ հետևողականորեն՝ ամեն անգամ պահպանելով վերջինիս նվագախմբային «ժանդերմանքը»: Գնելին այն ուղեկցում է առաջին գործողության ֆինալում, նա սպանվում է 2-րդ գործողության ֆինալում: Օլիմպիային շարքն ուղեկցում է իր ողբի ժամանակ (3-րդ գործողություն), իսկ Արշակին՝ 3-րդ գործողության ֆինալում. քնականաբար, արքան և թագուհին սպանվում են հաջորդ՝ 4-րդ գործողության ֆինալում:

Չուխաճյանի հարմոնիկ լեզվի կարևոր առանձնահատկություններից է ձայնաառությունների բազմակողմանի կիրառումը: Օպերայում հանդիպում են.

1. Տոնիկական ձայնաառություն – համարյա ամբողջությամբ տոնիկական ձայնաառության ֆունի վրա են ծավալվում Փառանձենի Es dur արիան (առաջին գործողություն), Արշակի e moll արիոզոն (4-րդ գործողություն), Օլիմպիայի մահառաջի արիայի d moll հատվածը (4-րդ գործողություն) և այլն:

Տոնիկական ձայնաառության կիրառման հարցում դրսևորվում է Չուխաճյանի հարազատությունը հայ ժողովրդական երաժշտական մտածողությանը. նկատենք, որ ձայնակարգի առաջին աստիճանի վրա հետագայում ձայնաառություններ պիտի օգտագործեր Կոմիտասը. հիշենք «Չինարես», «Կուժն առա» մեներգերի դաշնամուրային նվագակցությունները:

2. Գոմինանտային ձայնաառությունը հանդիպում է պրոլոգում, Արշակի «հառաչող» սեկունդաներով վարդնթաց շարժման վրա կառուցված մոտիվում (նախերգանք, առաջին գործողություն), ինչպես նաև ծավալուն դոմինանտային նախաիկտերն առկա են եռամաս ձևերի ռեպրիզներից առաջ:

3. Կրկնակի ձայնաառություն հանդիպում է հիմնականում բալետում (4-րդ գործողություն):

4. Ֆիգուրացված ձայնաառության կիրառման դեպքեր կան բալետում (4-րդ գործողություն), Օլիմպիայի մահառաջի արիայում (4-րդ գործողություն) և այլն:

Չոլխաճյանն օպերայում կիրառում է *soprano ostinato*, որի լավագույն նմուշներից է սգո խորալը (նախերգանք, 2-րդ և 4-րդ գործողությունների ֆինալներ):

Չայնառությունների կիրառման զուգահեռ Չոլխաճյանի հարմոնիկ լեզվին առավել բնորոշ է շարժում և մեղեդիական տեսակետից ինքնուրույն դինամիկ բասը. օպերայի շատ էջերում համդիայում ենք մեղեդիացված բասի, որի ցայտուն նմուշներից է Փառանձեմի *E dur* արիան (4-րդ գործողություն):

«Արշակ Բ» օպերայի լադատոնայնական կառուցվածքն առանձնանում է բացառիկ մտածվածությամբ ու տրամաբանվածությամբ. կոմպոզիտորը չի դիմում ոչ մի պատահական տոնայնության, նրա լադատոնայնական մտածողությանը բնորոշ է խիստ նպատակակարգությունը: Առանձին համարների, տեսիլների, անգամ գործողությունների սկիզբն ու վերջը կապված են լադատոնայնական միասնականությամբ: Այսպես, որևէ տեսիլի կամ հերոսների երաժշտական բնութագրերի սկզբնական ու վերջնական տոնայնություններն ընտրելիս կոմպոզիտորը հարազատ է մնում քրոմատիկ կիսատոնային քայլերին.

ա/ առաջին գործողությունն սկսվում է *As dur*-ում և ավարտվում *G dur*-ում,

բ/ նախերգանքի ռոնդոյի ռեֆրենը ծավալվում է *F dur*-ում, իսկ պոլկան (4-րդ գործողություն)՝ *E dur*-ում,

գ/ Արշակի արիան (1-ին գործողություն) շարադրված է *F dur*-ում, իսկ վերջին արիոզոն (4-րդ գործողություն)՝ *e moll*-ում:

Բացի նշված դեպքերից, երբ վերջնական տոնայնությունը գտնվում է սկզբնականից կես տոն վար, Փառանձեմի երաժշտական բնութագրի մեջ հակառակ երևույթն է. առաջին արիան (1-ին գործողություն) գրված է *Es dur*-ում, իսկ վերջինը (4-րդ գործողություն)՝ *E dur*-ում:

Բացի կիսատոնային համադրումներից՝ Չոլխաճյանն օգտագործում է տոնայնությունների տեղիքային համադրումներ.

ա/ նախերգանքն սկսվում է *B dur*-ում, ավարտվում՝ *G dur*-ում,

բ/ սիրո թեման նախերգանքում հնչում է 2 անգամ՝ *B dur* և *Ges. dur*, 2 անգամ էլ՝ 4-րդ գործողության մեջ (*D dur* և *F dur*),

գ/ սգո խորալը նախերգանքում հնչում է *b moll*-ում, իսկ 2-րդ և 4-րդ գործողություններում՝ *g moll*-ում,

դ/ Վաղինակի երաժշտական կերպարը բնութագրող առաջին ու վերջին տոնայնություններն են՝ *Es dur* և *G dur*:

Շարունակելով կատարելագործել տոնայնությունների տեղիքային համադրման սկզբունքը՝ Չոլխաճյանն այս կամ այն տեսիլի տոնայնական կառուցվածքի հիմքում դնում է հիմնական տոնայնության տոնիկական եռահնչյունը կազմող տոնայնությունները՝

ա/ 4-րդ գործողության անտրակտի և Օլիմպիայի մանկական տարիների վերնուշի տեսարանի տոնայնական կառուցվածքի հիմքում հիմնական *c moll*-ի տոնիկական եռահնչյունը կազմող տոնայնություններն են՝ *c moll*-*Es dur*-*G dur-c moll*,

բ/ 4-րդ գործողությունից բաղկացած տեսարանում *e* կենտրոնի շուրջ համախմբված *c moll* և *cis moll* տոնայնությունների տոնիկական եռահնչյունները կազմող տոնայնություններն են:

Տեղիքային համադրումներ Չոլխաճյանն օգտագործում է ոչ միայն առանձին տեսիլներում, այլև հերոսների երաժշտական բնութագրերի ստեղծման ժամանակ:

Չոլխաճյանը լայնորեն կիրառում է լադային շեղումները, որոնք առկա են Փառանձեմի արիայում (առաջին գործողություն)՝ *Es dur-es moll*-*Es dur*, Վաղինակի արիայում (2-րդ գործողություն)՝ *c moll*-*C dur-c moll*:

Տվյալ կերպարի բացահայտման համար համանուն տոնայնություններից զատ հեղինակն օգտագործում է նաև զուգահեռ տոնայնություններ՝

ա/ Արշակի արիան (1-ին գործողություն)՝ *F dur-d moll*-*F dur*,


բ/ Արշակի արիան (3-րդ գործողություն)՝ *c moll*-*Es dur*:

Այս կամ այն տեսարանի տոնայնական կառուցվածքի նկատմամբ բացառիկ տրամաբանական ու հիմնավորված մտածման արտահայտություն է 3-րդ գործողության ֆինալի գերեզմանոցի տեսարանի այն հատվածը, որ Արշակին են երևում Ուրվականները: Մայն հատվածը կառուցված է մոդուլացնող սեկվենցիաների վրա. յուրաքանչյուր Ուրվական կրկնում է միևնույն երաժշտական ֆրագմ, բայց նոր տոնայնության մեջ: Եվ անավասիկ այստեղ, փորձելով վերարտադրել գերեզմանոցում տիրող բազմաթիվ խաչերով լի տեսարանը, Չոլխաճյանն Ուրվականների տոնայնական պլանը կազմում է այնպիսի հնչյուն-տոնայնություններով, որոնց հաջորդականությունն առաջացնում է խաչ՝ *g-as-f-g*:

Պետք է նշել, որ այս տեսարանում առավելագույնս բացահայտվում է Չոլխաճյանի լադատոնայնական անսպառ երևակայությունը:

Համաշխարհային երաժշտության պատմությունից հայտնի է, որ կոմպոզիտորները, Մոցարտից սկսած, ֆանտաստիկ կերպարների ստեղծման համար օգտագործում են ամբողջատոն գամմա. հիշենք, որ Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայում այն հերոսներից մեկի՝ Չերեմուրի երաժշտական բնութագրի կարևոր բաղկացուցիչ մասն է: Ամբողջատոն գամման լայնորեն կիրառել են նաև Դարգոմիշսկին, Բորտոլինը, Ռիմսկի-Կորսակովը, Դերյուսին: Ամբողջատոն գամմայի օգնությամբ ավելի ուշ դիմեց նաև Չայկովսկին 1890-ին գրած «Лиховая дама» օպերայում կոմսոհու Ուրվականի բնութագրման համար:

Եվ անավասիկ Չոլխաճյանն իր օպերայում Ուրվականների տեսարանի ստեղծման համար օգտագործում է ոչ թե պարզապես ամբողջատոն գամմայի շարքը, այլ կիրառում քրոմատիկ սեկվենցիաներ, որոնց տոնայնությունների շարքն էլ հենց առաջացնում է ամբողջատոն գամմա: Այսինքն՝ Չոլխաճյանի մոտ ամբողջատոն գամման քողարկված է, ինչն անշուշտ վկայում է հեղինակի տոնայնական վառ երևակայության մասին:



Չուխաճյանի հարմոնիկ լեզվի կարևոր առանձնահատկություններից է մաս 2-րդ, 3-րդ և հեռավոր այլ ազգակից տոնայնությունների համադրումը: Հաճախակի են հանդիպում անսպասելի էմֆատիկ շեղումներ, ընդ որում դրանց համար կոմպոզիտորը հիմնականում օգտագործում է փոքրացրած սեպտակորդ. առաջին գործողությունից Արշակի և Փառանձեմի գոգերգում կատարվում է էմֆատիկ զարտություն A dur-ից c moll VII, = VII₁:

Օպերայի պարտիտուրում շատ են քրոմատիկ և մոդուլացնող սեկվենցիաները, որոնք երաժշտությանը հաղորդում են մի առանձին քարտություն և գունազեղություն: Որպես քրոմատիկ սեկվենցիայի փայլուն օրինակ՝ կարելի է նշել մախերգանքի ռոնդոյի երկրորդ դրվագը. սեկվենցիայի կազմի մեջ մտնող տոնայնությունների ընտրությունն այստեղ պատահական չէ. արդյունքում առաջանում է պենտատոնիկա.

As-dur-b moll-c moll-Es dur-f moll-As dur

Մոդուլացնող սեկվենցիաներ կիրառված են գերեզմանոցի տեսարանի սկզբում՝ մրրիկի պատկերման ժամանակ, Արշակի արիայում (3-րդ գործողություն), 3-րդ գործողության ֆինալի գերեզմանոցի տեսարանում (Ուրվականների խաչը) և այլն:

Չուխաճյանը լայնորեն կիրառել է զարգացման պոլիֆոնիկ միջոցները. հանդիպում են իմիտացիաներ, միևնույն թեմայի մեծացրած և փոքրացրած անցկացումներ, թեմայի հայելանման տարբերակի կիրառում և այլն:

Կոմպոզիտորն օգտագործում է մաս թեմայի տարբերակային փոխակերպումներ՝ ա/ գերեզմանոցի տեսարանում Ուրվականների թեմայի թեմատիկ կորիզն առկա է նույն գործողության 1-ին և 2-րդ տեսիլների նվագախմբային մուտքերում,

բ/ 4-րդ գործողության բալետի և հաջորդող լարերգային տեսարանի թեմատիզմում:

Օպերայում բազմիցս հանդիպում են ռեմինիսցենցիաներ, ինտոնացիոն կամորջներ:

Երաժշտական դրամատուրգիայի ամբողջականությանը հասնելու նպատակով կոմպոզիտորը տարածության վրա ստեղծում է լադատոնայնական և թեմատիկ կամորջներ, իսկ միջանցիկ զարգացման անընդհատությունն ու մի էպիզոդից մյուսը ճկուն անցումներն ապահովում են օպերայի ձևի միասնականության ամրապնդումը:

Սիմֆոնիկ սրանք են Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի երաժշտական լեզվի այն հիմնական առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են ընձեռում ստեղծագործությունն իր կատարելությանը համարել օպերային արվեստի դասական մոտիվներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] *Arsace Secondo*, Atto 1^{mo}, No1, Introduzione=Coro, կլավիր, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Տ.Չուխաճյանի ֆոնդ (պարունակում է 35 ձեռագիր էջ):
- [2] Atto 1-mo, No2, *Scena e duetto* Paransema, կլավիր, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Տ.Չուխաճյանի ֆոնդ (պարունակում է ձեռագիր 22 էջ):
- [3] Atto 1^{mo}, No3, *Finale* 1^{mo}, կլավիր, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Տ.Չուխաճյանի ֆոնդ (պարունակում է ձեռագիր 28 էջ):
- [4] Atto 4^o, No10, *Preludio e Scena*, No 11, *Scena Duetto e Coro*, կլավիր, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Տ.Չուխաճյանի ֆոնդ (պարունակում է ձեռագիր 24 էջ):
- [5] «Արշակ Բ» օպերայի մախերգանքի պարտիտուրը (պարունակում է ձեռագիր 26 էջ), Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Տ.Չուխաճյանի ֆոնդ:
- [6] «Արշակ Բ» օպերայի ամբողջական պարտիտուրը, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Տ.Չուխաճյանի ֆոնդ:
- [7] *Գլոդակյան Գ.*, Տիգրան Չուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Երևան, Երևան, 1971:
- [8] *Խոզարյան Կ.*, Տ. Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայի ժանրային բնութաչումը, Ավանգարդ, 1999, 24-28 հունիսի:
- [9] *Մուրադյան Մ.*, Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության, Երևան, 1989:
- [10] Տիգրան Չուխաճյան, Մատենագիտություն, Երևան, 1964:
- [11] *Փափազյան Հ.*, Տիգրան Չուխաճյան - Կեսանը եւ գործը, Իսրահայլ, 1975:
- [12] *Кучишарев Х.* Вопросы истории и теории армянской монодиической музыки. II., 1958.
- [13] *Тигранов Г.* Армянский музыкальный театр, т. I. Ереван, 1956.

ИЗ ИСТОРИИ АГИТАЦИОННО-МАССОВОГО ИСКУССТВА В АРМЕНИИ НАЧАЛА 1920-х ГОДОВ (О деятельности художественного отдела Арменга в 1921—1923 годы)

Авакян А.

Институт искусств НАН РА

Սվազյան Ս. Հայաստանում 1920-ական թթ. սկզբներին ագիտացիոն-մասսայական արվեստի պատմությունից (Արմենուայի գեղարվեստական բաժնի գործունեության մասին 1921-1923 թթ.). Հայաստանի Հեռագրային գործակալության (Արմենուա, ԱրմԿալՈՒՍՍԱ, ՀայԿալՈՒՍՍԱ) գեղարվեստական բաժնի պատմությանն առնչվող նյութերի դիտարկումը հաստատում է արվեստաբանական գրականության մեջ բազմիցս արտահայտված կարծիքը բաժնի ակտիվ մասնակցության մասին Հայաստանի 1920-ական թթ. սկզբների գեղարվեստական կյանքում: Միաժամանակ, այդ նյութերի նոր, անկանխակալ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի ճիշտ իմաստավորելու կերպարվեստի ագիտացիոն-մասսայական ձևերի տեղն առհասարակ խորհրդահայ գեղարվեստական մշակույթի կազմավորման ընթացքում:

Avagian A. From history of mass-agitation art in Armenia in early 1920-s (About Art Department Activity of Armenia in 1921-1923). The study of the materials on Armenia (Telegraphic agency of Armenia) art department history confirms the opinion, often articulated in the art critical literature, that this institution had actively participated in the art life of early 1920-s. However a new and impartial approach in studying the mentioned materials provides an opportunity of more accurate realization of the role of fine arts mass-agitation forms in the general process of formation of art culture in Soviet Armenia.

Коренные социальные преобразования, вызванные известными октябрьскими событиями 1917г., наложили глубокий отпечаток как на общественную, так и на культурную жизнь народов